

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի որոշումով Մայր Աթոռում վերակազմակերպվեց Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերություններ բաժինը, որի հիմնական նպատակն է առավել գործոն կերպով բերել հայ եկեղեցու մասնակցությունը համաշխարհային էկումենիկ շարժմանը և աշխարհի խաղաղության ամրապնդման գործին, սերտ հարաբերություններ մշակել և գործակցել քրիստոնյա եկեղեցիների, Եկեղեցիների համաշխարհային խորհըրդի և այլ կրոնական և էկումենիկ կազմակերպությունների հետ:

Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու վարիչ է նշանակված Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը:

**ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ**

11-ը հունվարի 1973 թ.,

Ս. Էջմիածին